Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2017թ. հուլիսի 6-ի թիվ 8 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ,
Ա. Հ. Սիմոնյան
«6» հուլիսի 2017թ.

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը (այսուհետ՝ կանոնակարգ) սահմանում է Երևանի պետական համալսարանում ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման ձևով ուսանողական նպաստների հատկացման, պետական և ներբուհական կրթաթոշակների տրամադրման կարգը և պայմանները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանները, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:

3. Ուսանողական նպաստը (ուսանողական կրթաթոշակը) լրիվ կամ մասնակի փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, Երևանի պետական համալսարանի ֆինանսական միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

(3-րդ կետը լրացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 22.03.2018թ. թիվ 5/3 որոշմամբ)

4. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բուհերի ընդունելության ընդհանուր մրցույթով առկա ուսուցման համակարգ ընդունված և բակալավրի կամ մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների վրա:

Սույն կանոնակարգի 14-րդ, 19-23-րդ (բացառությամբ՝ 19.9. ենթակետի) կետերի դրույթները, ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման մասով տարածվում են նաև բուհերի ընդունելության ընդհանուր մրցույթով հեռակա ուսուցման համակարգ ընդունված և բակալավրի կամ մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների վրա:

(4-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 22.03.2018թ. թիվ 5/3 որոշմամբ)

2. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

5. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում (ուսանողական կրթաթոշակ) տրամադրվում է՝

5.1. մեկ ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով,

5.2. օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

գ) զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան երեխա-ուսանողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

դ) ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող-ուսանողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,

ե) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին:

Ընդհանուր մրցույթից դուրս, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողները՝ որպես նպատակային ուսուցմամբ ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնությունից մինչև ուսումնառության ավարտը:

Սույն կանոնակարգի 5.2. կետի «ա» և «ե» ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսից մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը:

Սույն կանոնակարգի 5.2. կետի «բ», «գ» և «դ» ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում ուսանողական նպաստներ տրամադրվում են 1-ին կուրսի սկզբում և վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի վերջում:

(5-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 22.03.2018թ. թիվ 5/3 որոշմամբ)

6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի, մասնագիտությունների և կրթական ծրագրերի բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը, որը տեղափոխվում է կուրսից կուրս:

7. Երևանի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրով առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով: Հաջորդ կուրսերում

վերոնշյալ ուսանողների ուսանողական նպաստը տրամադրվում է սույն կանոնակարգի 5.1. ենթակետում սահմանված մրցութային կարգով:

(7-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 22.03.2018թ. թիվ 5/3 որոշմամբ)

8. Սույն կանոնակարգի 5.1-րդ ենթակետի համաձայն տրամադրվող ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից հրաժարվելու վերաբերյալ դիմումներն ընդունվում են մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը և դրանց քննարկումը կազմակերպվում է սույն կանոնակարգի 10-րդ և 11-րդ կետերում նշված մանդատային հանձնաժողովների կողմից:

9. Սույն կանոնակարգի 5.1. ենթակետում նշված ուսանողների համար մրցույթը կազմակերպվում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 10-ը, նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակում հանձնած քննությունների և ստուգարքների արդյունքների (ՄՈԳ-ի) հիման վրա: ՄՈԳ-ը հաշվարկվում է Երևանի պետական համալսարանում գործող գիտելիքների գնահատման սանդղակի կիրառմամբ (հարյուրերորդականի ճշտությամբ):

Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման համար անցկացվող մրցույթին չեն կարող մասնակցել սեպտեմբերի 10-ի դրությամբ ակադեմիական պարտքեր ունեցող ուսանողները:

Ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքում միևնույն պայմանների դեպքում հավասար միավորներ ունեցող երկու և ավելի ուսանողների պարագայում՝ երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին:

Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի, ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը:

10. Սույն կանոնակարգի 9-րդ կետում նշված ցուցակը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի քննարկմանը:

Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի դեկանը, դեկանի տեղակալը, արհբյուրոյի նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչը:

Ֆակուլտետի մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, իրականացնում է մրցույթ և կազմում է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է մանդատային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ցուցակի հաստատման համար կազմվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ պարտադիր կարգով գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը և մրցութային ցուցակը ստորագրվում են մանդատային հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

11. Սույն կանոնակարգի 9-րդ կետում նշված ցուցակները և արձանագրությունները մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 10-ը, համապատասխան ֆակուլտետի

դեկանի կողմից ներկայացվում են համալսարանի մանդատային հանձնաժողովի դիտարկմանը և հաստատմանը:

Համալսարանի մանդատային հանձնաժողովի կազմը հաստատվում է Երևանի պետական համալսարանի ռեկտորի հրամանով: Մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Երևանի պետական համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը (հանձնաժողովի նախագահ), ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության, հաշվապահության, իրավական ապահովման բաժնի, ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, արհեստակցական կազմակերպության, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչները:

Սույն կանոնակարգի 9-րդ կետում նշված ցուցակներում անճշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերվելու դեպքերում համալսարանի մանդատային հանձնաժողովն իրավասու է տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը հետ վերադարձնել տվյալ ֆակուլտետ՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով:

Սխալներ և ընթացակարգի խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական տույժերի, որը ձևակերպվում է համալսարանի ռեկտորի հրամանով:

(11-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 22.03.2018թ. թիվ 5/3 որոշմամբ)

12. ԵՊՀ մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները մեկօրյա ժամկետում ուղարկվում են ուսանողների էլեկտրոնային հասցեներին: Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն համալսարանի մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո համալսարանի մանդատային հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է Երևանի պետական համալսարանի ռեկտորին:

Երևանի պետական համալսարանի ռեկտորի հրամանում պարտադիր կարգով նշվում է ուսանողական նպաստի տրամադրման ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը:

Երևանի պետական համալսարանի ռեկտորի հրամանով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո ուսանողների այլ ուսումնական հաստատություն կամ այլ ֆակուլտետ փոխադրվելու, ինչպես նաև համալսարանից ազատվելու դեպքերում ազատված ուսանողական նպաստները, տվյալ ուսումնական տարում, այլ ուսանողների չեն տրամադրվում:

13. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում):

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից սույն կետով սահմանված պատճառներով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ազատված ուսանողական նպաստը նույն

կուրսում տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստներին որտեղ ուսանողը վերականգնում է իր ուսանողական իրավունքները:

14. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, Երևանի պետական համալսարանի այլ մասնագիտություններից (կրթական ծրագրերից), ուսումնառության համակարգից տեղափոխված ուսանողները, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել Երևանի պետական համալսարանում տվյալ մասնագիտությունում, առկա ուսուցման համակարգում առնվազն մեկ ուսումնական տարի սովորելուց հետո, իսկ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ առկա և հեռակա ուսումնառության համակարգում մեկ կիսամյակ սովորելուց հետո:

3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

15. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

ա) մինչև 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 50 տոկոսի չափով.

բ) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 60 տոկոսի չափով.

գ) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 70 տոկոսի չափով.

դ) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 80 տոկոսի չափով.

ե) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 100 տոկոսի չափով:

16. Ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

17. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի բուհին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

18. Սահմանված կարգով բուհի 1-ին կուրս ընդունված և ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին՝ ընդունելության մրցութային քննությունների արդյունքում համապատասխան միավորի շեմը հաղթահարելու դեպքում ուսանողական նպաստները տրվում են ըստ սույն կարգի 15-րդ կետով սահմանված չափերի և 17-րդ կետով սահմանված ընթացակարգով:

Ըստ կրթական աստիճանների մասնագիտությունների համապատասխան միավորի (մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ միջին որակավորման գնահատականի) նվազագույն շեմերը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

19. Երևանի պետական համալսարանը, վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տաս տոկոսին, ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իր միջոցների հաշվին իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

19.1. սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոսի չափով,

19.2. 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ 50 տոկոսի չափով,

19.3. 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոսի չափով,

19.4. մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոսի չափով,

19.5. երեք և ավելի անչափահաս, կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 30 տոկոսի չափով,

19.6. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ (բժշկասոցիալական փորձաքննական որոշման և ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի վկայականի ներկայացման դեպքում) ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոսի չափով,

19.7. մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին (զինվորական գրքույկում համապատասխան գրառման առկայության դեպքում)՝ 30 տոկոսի չափով,

19.8. սոցիալապես անապահով (ընտանիքների ապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0-ից բարձր մինչև սահմանային միավորի շեմը միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 20 տոկոսի չափով,

19.9. ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերության պատճառով՝ 50 տոկոսի չափով,

19.10. մարտական գործողությունների մասնակիցների (ազատամարտիկների) երեխա ուսանողներին (ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի վկայականի ներկայացման դեպքում)՝ 20 տոկոսի չափով,

19.11. (**19.11. կետն ուժը կորցրած է ճանաչվել ԵՊՀ ԳԽ-ի 2019թ. մայիսի 23-ի նիստի թիվ 10/4 որոշմամբ**),

19.12. Երևանի պետական համալսարանում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող-ուսանողներին և աշխատողների երեխա-ուսանողներին, հետևյալ չափերով.

ա) Երևանի պետական համալսարանում 5-15 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար 60

տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 40 տոկոսի չափով), մյուս տարակարգերի աշխատողների համար՝ 50 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 30 տոկոսի չափով).

բ) Երևանի պետական համալսարանում 15 տարուց ավելի մինչև 25 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար՝ 70 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 50 տոկոսի չափով), մյուս տարակարգերի աշխատողների համար՝ 60 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 40 տոկոսի չափով).

գ) Երևանի պետական համալսարանում 25-ից ավելի տարիների աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար՝ 80 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 60 տոկոսի չափով), մյուս տարակարգերի աշխատողների համար՝ 70 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 50 տոկոսի չափով):

19.13. Երևանի պետական համալսարանի կողմից անցկացվող դպրոցականների օլիմպիադայում 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմի արժանացած ուսանողներին՝ 1-ին կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 50 տոկոսի չափով, 2-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 40 տոկոսի չափով և 3-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 30 տոկոսի չափով: Սույն կետով սահմանված ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումն ուսանողին տրամադրվում է միայն ուսումնառության 1-ին կուրսում:

19.14. առանձնահատուկ դեպքերում, այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ ԵՊՀ ռեկտորի որոշմամբ սահմանված չափով:

(19-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 22.03.2018թ. թիվ 5/3 որոշմամբ)

20. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող, կամ մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

21. ԵՊՀ կողմից տրամադրվող ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը սահմանվում է ԵՊՀ ռեկտորի հրամանով:

22. Սույն կանոնակարգի 19-րդ կետով սահմանված ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն ընդունվում են առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների դեպքում՝ յուրաքանչյուր կիսամյակի առաջին չորս շաբաթների ընթացքում, իսկ հեռակա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների դեպքում՝ դասերի փաստացի սկսելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

Սույն կետում սահմանված ժամկետների ավարտից հետո ներկայացված ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումները ենթակա չեն քննարկման:

23. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա ու հեռակա ուսումնառության համակարգերում սովորող առաջին կուրսի ուսանողները, ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից, բացառությամբ սույն կանոնակարգի 19.12-րդ և 19.13.-րդ կետերով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողների, ովքեր ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ուսումնառության առաջին կիսամյակից:

Սույն կանոնակարգի 19.9. ենթակետում սահմանված կարգով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողները՝ սկսած երկրորդ կուրսից:

Սույն Կանոնակարգի 19-րդ կետով սահմանված ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ուսանողին տրամադրվում է մեկ ուսումնական կիսամյակի համար, բացառությամբ 19.9. և 19.13. կետերի, որում սահմանված դեպքերում ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումը տրամադրվում է մեկ ուսումնական տարվա համար:

(23-րդ կետը լրացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 22.03.2018թ. թիվ 5/3 որոշմամբ)

4. ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

24. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական օժանդակություն է գերազանց և լավ առաջադիմություն ցուցաբերած, հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին՝ ֆինանսական խրախուսանքի ձևով:

25. Ուսանողների հասարակական ակտիվ դիրքորոշումը բնութագրվում է ստորև նշվող ցուցանիշներով՝

ա) մասնակցությունը ֆակուլտետի և համալսարանի ուսանողական հասարակական աշխատանքներին,

բ) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում,

գ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

դ) ֆակուլտետի կամ համալսարանի ղեկավարության մեկանգամյա կամ բազմակի հանձնարարականների բարեխղճորեն և ժամանակին կատարում, որոնք ունեն համապատասխան ձևակերպում:

26. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից համալսարանի ներքին կարգապահության կանոնների խստիվ պահպանմամբ, և նշված կանոնների խախտման առիթով ռեկտորի, պրոռեկտորի կամ ֆակուլտետի դեկանի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են հանդիսանում պետական կրթաթոշակ չհատկացնելու համար:

27. Երևանի պետական համալսարանի առկա ուսուցման համակարգում սովորող 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամության կարգ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին, ինչպես նաև զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից:

Երևանի պետական համալսարանում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ համալսարանում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

28. Երևանի պետական համալսարանի պետական կրթաթոշակների թվաքանակը և չափը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով համալսարանին հատկացված միջոցների սահմաններում:

29. Երևանի պետական համալսարանում պետական կրթաթոշակների հատկացման և հրամանագրման գործընթացը կազմակերպվում է սույն կանոնակարգի 10-րդ կետում

նշված մանդատային հանձնաժողովների միջոցով և համապատասխան կարգով: Մրցույթի անցկացումից հետո տվյալ մասնագիտությունում ազատ պետական կրթաթոշակներ առաջանալու դեպքում դրանք կարող են վերաբաշխվել ֆակուլտետի մյուս մասնագիտությունների (կրթական ծրագրերի) վրա:

30. Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին սույն կանոնակարգի 24-26-րդ կետերում նշված պայմանների պահպանման պարագայում պետական կրթաթոշակի հատկացումը վերահաստատվում է: Թվարկված պայմանները չապահովելու դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից:

31. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են տվյալ մասնագիտության այլ ուսանողների:

32. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված կրթաթոշակ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում):

33. Երևանի պետական համալսարանն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու ներբուհական, այդ թվում՝ անվանական կրթաթոշակներ:

34. Երևանի պետական համալսարանի անվանական կրթաթոշակ նշանակվում է բակալավրիատի և մագիստրատուրայի առավել աչքի ընկնող, վերջին 4 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն մագիստրատուրայի ուսանողների դեպքում հաշվի են առնվում նաև բակալավրիատում ցուցաբերած առաջադիմության արդյունքները և գիտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին:

35. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունները քննարկում են ֆակուլտետների գիտական խորհուրդները, որի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն են ներկայացնում համալսարանի ուսումնամեթոդական վարչությանը: Անվանական կրթաթոշակների հավակնորդների ցուցակը ներկայացվում է Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը: Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է անվանական կրթաթոշակները, որի հիման վրա համալսարանի ռեկտորը տալիս է համապատասխան հրաման: Անվանական կրթաթոշակից զրկելը կատարվում է ռեկտորի հրամանով:

36. Անվանական կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի սկզբում:

Ուսանողը զրկվում է նշանակված անվանական կրթաթոշակից, եթե ուսումնական կիսամյակի ավարտին չի համապատասխանում սույն կանոնակարգի 34-րդ կետով սահմանված չափանիշներին: